*դարուած է քրիստոնէական Ե.—ԺԳ.-րդ դարը Այրարատում, նոյն ճարտարապետութիւնը նկատելի է Ճորոխի աւազանում։*

---

Բաղ, Բաղինք, Բաղարան, Բաղիրեայլայ, Բաղաուիճ, Բաղահիճ եւ Բաղամ արդեօք Բաղբատունիների ծագման եւ զարգացման նախնական կէտը չէ՞, որ իջել են իրենց Էրքենէխից, Բաղին են հաստատել դաշտում եւ տարածուել են դէպի հարաւ՝ Բաբերդոն, արեւմուտք՝ Բալախոս եւ արեւելք՝ Սպեր։ Բաղ՝ զոհարանի սեղանը չէ, այս անունները մինչեւ այս օր այնպէս են ամրացած-քարացած բնակչութեան գանկում, որ ասանեակ դարերով չի մոռանում։ Բաղը ոչ միայն Բալախոսի եւ Օլթիի մէջն է, այլ դա անցել է Արաքսի ափերը, Անիի գլխին — Ալաջա սարի լանջին Բաղնայր, Արագածի գագաթին՝ Բաղուլիճ, Արաքսի, Ախուրեանի ափերին՝ Բաղրան, Բաղայաուինճ եւն։ Մինչեւ Սաւալան լերան այրերում եւ տաճարներում ապրող արեւ-մոխրապաշտ քուրմ-մոգերի նախորդների բաղինները չե՞ն հիմնուած նաւթ աշխարհի մշտաբորբոք գազերի եւ բոցերի (Սուրախանի) բարձունք բաղինները, որոնք 40—50 դար անջնջելի են մնացել Բաղուի վրայից։

Պէտք է ենթադրել, որ ինչպէս մշտաբորբոք կրակի արտայայտուած կէտերում, նոյնպէս կենսական ջրերի բղխած ակերում հիմնուած են Բաղինները - Զոհարանի սեղանները, պաշտօն մատուցանելու Միհր աստուծուն, արեւին եւ Մեծամոր-Ընահտին, անբիծ ջրերի արտադրողին։ Այսպէս զոհարարներն էլ կոչուել են Բաղ-բատներ (զոհ անողներ), որոնք ճոխանալով կազմեցին Բաղբատունիների տոհմը, Բաբերդոն-Սպերում։ Այն մոգերը, որոնք սկսել էին իրենց գործունէութիւնը աղբերակների Բաղիններում զոհարարութեամբ. Վիշապազանց դարում նրանք ոչ միայն վճիռ աղբիւրների եւ Մեծամոր պաշտօնեաներ էին, այլ եւ իրենց սահմանների ջրպետներն ու ջրաշխներն էին։ Ակկաս-Սումերների երկրի ջրանցքների զարգացման դարում, երբ երկրամշակութիւնը զարգացաւ ջրանցքների շնորհիւ, ջրանցքների շինարարութիւնը հասարակական ամենաանհրաժեշտ գործն էր եւ երկրամշակի իդէալն էր ջրանցք ունենալ իր ցանքսերի մօտ եւ Վիշապազանց քուր-